ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«29» մայիսի 2016 թ. N 21-ա(3)

## Շ. ԼԱԶՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի գ) կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի <<Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին>> N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի <<Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին>> N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 18-րդ կետի ա) ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսաբյուջետային բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 30-3.2-9) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 27-ի եզրակացությունը և Շ. Լազյանի դիմումը.

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շուշան Գուգուշի Լազյանին 2016 թվականի մայիսի 27-ից նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսաբյուջետային բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 30-3.2-9) պաշտոնում՝ լուծելով ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսաբյուջետային բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 30-3.2-9) ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2015 թվականի մարտի 16-ին կնքված N 4 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:
2. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ